

# Գեղարքունիքի մարզպետն ընդունեց ֆրանսիական 'Աֆրատ' տուրիստական կազմակերպության ներկայացուցիչներին

20.06.2017

Հունիսի 20-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության 'Աֆրատ' տուրիստական կազմակերպության ներկայացուցիչներ Մարտին Շալինյեին, Սեբաստիան Ֆավիենին եւ Անժելա Գավրիեին: Հանդիպումը կայացավ Գեղարքունիքի եւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզերի միջեւ 2016 թվականին կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում: Հանդիպման սկզբում Սեբաստիան Ֆավիեն խոսեց համագործակցության շրջանակներում իրականացված ծրագրերի մասին, ապա ներկայացրեց նույն համագործակցության ծրագրերով նախատեսված անելիքները, որոնք էլ ավելի կիսթանդերտուրիզմի գովազդումն ու աշխուժացումը Գեղարքունիքի մարզում: Մեր ծրագրերի առաջին առանցքը համայնքներում հետազոտությունների զարգացմանն ուղղված քայլն է, որտեղ նախատեսում ենք մասնագիտական վերապատրաստումներ՝ զարգացման ծրագրերի իրականացման և առաջին բուժօգնության կազմակերպմանն ուղղություններում: Երկրորդ առանցքը տուրիզմի բնագավառի համակարգումն է, որտեղ մեծ դեր է վերապահվում Մեւան քաղաքում հիմնված տուրիստական տեղեկատվական գրասենյակի գործունեությանը, իսկ երրորդ առանցքում մարզի քաղաքներում տուրիստական ցուցանակների տեղադրման ծրագիրն է՝ ներկայացրեց Սեբաստիան Ֆավիեն:

Անդրադառնալով ներկայացված ծրագրերին եւ համագործակցության հետագա քայլերին՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը ֆրանսիական կողմին հավաստիացրեց, որ Գեղարքունիքի մարզպետարանը պատրաստակամ է շարունակելու համագործակցությունը ինչպես ընթացքի մեջ գտնվող, այնպես էլ հեռանկարում սպասվող ծրագրերի իրականացմանն ուղղություններում: Ողջունում եմ ֆրանսիացի մեր գործընկերներին եւ ուզում եմ հավաստիացնել, որ մեր կապը կլինի էլ ավելի ամուր, համագործակցությունը՝ առարկայական: Մենք հնարավորինս կաջակցենք, որ տուրիզմը նկատելի զարգացում եւ վերելք ապրի մեր մարզում, իսկ մեր սերտ համագործակցությունը վերածվի բարեկամության, նշեց Գեղարքունիքի մարզպետը: Մարզպետ Կարեն Բոթոյանը ֆրանսիական կողմին առաջարկեց՝ լայն համագործակցություն հաստատել նաեւ մարզում գործող հասարակական կազմակերպությունների հետ, որոնք նշանակալի փորձ են ձեռք բերել տուրիզմի, բնապահպանության, բիզնեսի զարգացման ոլորտներում: